




ԾԱՂԿԱԶԱՐԴ

Համաշխարհային Օր Երիտասարդութեան



ԺԱՄԱՄՈՒՏ

Տնձա՛ Երուսաղէմ եւ յարդարէ հարսնարանդ՝ Սիոն, որովհետեւ ահա՛ Զրիստոս, Թագաւորդ, նստած մատաղ աւանակի վրայ՝ հեզութեան օրինակ տալով, կու գայ եւ կը մտնէ քու հարսնարանդ՝ Սիոն:

Մե՛նք եւս, ձայն բարձրացնելով ըսենք Ովսաննա՛, Օրինեալ Է Ան, որ կու գայ Տիրոջ անունով, որ Տէր Է անսահման ողորմութեան:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԱԿ.

Հօր անսկիզբ Բանը, որ քերովբէներու վրայ կը հանգչի, այսօր նոր աւանակի վրայ նստաւ: Օրինեալ Է եկող Արքան, Անյաղթելի Թագաւորը:

Յաւերժէն առաջ Որդին, որ քառադէմ քերովբէներուն վրայ կը բազմի, այսօր ծերերէն եւ մանուկներէն փառաւորուեցաւ: Օրհնեալ է եկող Արքան, Անյաղթելի Թագաւորը:

Եկէ՛ք նոր ժողովուրդներ, անմարմին դասերու բազմութեան հետ փառք տակը Անոր քաղցրածայն երգաբանութեամբ:

ՄԵՍԵՂԻ (Սղմ. 97, 9 եւ 1)

Լեռները Տիրոջ առջեւ թո՛ղ ցնծան, որովհետեւ ահա կու գայ եւ հասած է Տերը, երկրի ամբողջ իշխանութիւնն իր ձեռքն առնելու համար: Լորանոր երգերով օրհնեցէ՛ք Տերը, որովհետեւ սքանչելիքներ գործեց:

**ԸՆԹԵՐՅՈՒԱԾ
ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ ՄԷջ**

**Պօղոս Առաքեալին Փիլիպպեցիներուն ուղղած Թուղթն է ընթերցուածը.
(Փիլ. 4, 4-7)**

Միշտ ուրախ եղէք Տիրոջ մէջ, դարձեալ կը կրկնեմ՝ ուրախ եղէ՛ք: Թո՛ղ ձեր հեզութիւնը յայտնի ըլլայ բոլոր մարդոց. Տերը մօտ է:

Մտահոգութիւններ մի՛ պահեք ձեր սրտերուն մէջ. այլ ձեր բոլոր կարիքներուն մէջ դիմեցէք աղօթքի եւ պա-

ղատանքի, լեցուած շնորհակալութեան իղծերով, ձեր պաղատանքները բարձրացուցէք առ Աստուած:

Այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ գերիվեր է ամէն մտքէ, պիտի հովանաւորէ ձեր սրտերն ու խորհուրդները, Յիսուս Զրիստոսի մէջ:

Ալէլուիա, Ալէլուիա,

Տերը ճիշդ այս օրը ընտրեց, եկէ՛ք, ցնծանք եւ մասնաւորապէս այսօր ուրախանանք:

(Սաղմոս 117, 24)

Ալէլուիա:

**ԱՒԵՏԱՐԱՆ
ՅԻՍՈՒՄԻ ՄՈՒՏԵԸ ԵՐՈՒՍԱԴՆԵՍ**

(Մատթ. 21, 1-17)


Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփաքէի մօտ, Ձիթենեաց լեռը, Յիսուս երկու աշակերտներ դրկեց եւ ըսաւ անոնց. «Գացէք դիմացի գիւղը, ուր պիտի գտնէք էշ մը՝ կապուած եւ հետը քուռակը. քակեցէ՛ք զանոնք եւ հոս բերէք. եթէ մէկը բան մը ըսէ՝ պատասխանեցէք, թէ Տերը կ'ուզէ զանոնք եւ պիտի թողու որ բերէք»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանար մարգարէին խօսքը. Ըսէք Սիոնի աղջկան՝ ահաւասիկ

թագաւորդ քեզի կու գայ խոնարհ եւ հեծած է իշու վրայ, իշու աւանակի վրայ: Աշակերտները գացին եւ ըրին ինչպէս որ Յիսուս հրամայած էր. բերին էշը եւ անոր քուռակը, դրին անոնց վրայ իրենց հագուստները եւ Յիսուս վրան նստաւ:

Այն ատեն, մարդիկ մեծ բազմութեամբ, իրենց հագուստները տարածեցին ճամբուն վրայ, ուրիշներ՝ ծառերէն ոստեր կը կտրէին ու կը դնէին ճամբուն վրայ: Մարդիկ, որոնք առջեւէն կ'երթա-

յիս կամ ետեւէն կու գային, կ'աղաղակէին. Ովսանա, Դաւիթի Որդիին, օրհնեալ ըլլայ Ան, որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութիւն երկիւքի բարձունքներն ի վեր: Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ: «Ո՞վ է» կը հարցնէին մարդիկ: Ժողովուրդի բազմութիւնը պատասխանեց. «Մարգարէ Յիսուսն է, Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն»:

Յետոյ Յիսուս Տաճար մտաւ եւ վրընտեց բոլոր անոնք, որոնք կը ծախէին ու կը գնէին Տաճարին մէջ, տապալեց լումայափոխներու եւ աղանի վաճառողներու սեղանները: Եւ ըսաւ անոնց. Տունս աղօթքի տուն պիտի կոչուի, եւ դուք գայն աւազակներու քարայր դարձուցիք: Տաճարին մէջ, կոյրեր եւ կաղեր մօտեցան իրեն եւ բժշկեց գանոնք: Տեսնելով զարմանալի հրաշքները, զորս կը գործէր եւ լսելով մանուկները, որոնք կ'աղաղակէին՝ «Օրհնութիւն Դաւիթի Որդույն», քահանայապետներն ու դպիրները զայրացան եւ ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն»: «Այո՛, պատասխանեց անոնց եւ ասելցուց. Երբեք չէ՞ք կարդացած այս գրուածքը. մանուկներու եւ կաթնկերներու բերնով օրհնութիւն պատրաստեցիր քեզի»: Թողուց գանոնք այնտեղ, քաղաքէն մեկնեցաւ եւ գնաց Բեթանիա, ուր գիշերեց:



ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

«Տունս աղօթքի տուն պիտի կոչուի» Ես 56,7

Եսաիա մարգարէի այս խօսքը՝ զոր մեր Տէրը Յիսուս Քրիստոս ըսաւ տաճարին մէջ առեւտուր եւ վաճառականութիւն ընողներուն, ուղղուած է նաեւ մեզմէ իւրաքանչիւրին, որովհետեւ մեր մարմիններն ու հոգիները տաճարներն են Սուրբ Զոգիին, ուր ինք մուտք պիտի գործէ հեզութեամբ եւ խոնարհութեամբ: Զետեւաբար, պէտք է, որ մեր ներքին տաճարը վերասրբացնենք՝ անոր մէջէն փարատելով եւ վերացնելով ամէն տեսակի մարդկային հոգ եւ զբաղում:

Մեր մարմինները Տիրոջ բնակարանն են եւ աղօթքի ու սրբութեան վայր:

Զետեւաբար, առիթը պէտք չէ տանք որ սատանան գայն վերածէ աւազակներու քարայրի: Աւազակները այս հատուածին մէջ կը խորհրդանշեն մեր կեանքէն եւ սրտէն խաղաղութիւնը յափշտակողներ: Մեզ մոլորեցնողներ: Կանչուած ենք մենք ալ Յիսուսի հետ խոնարհութեան եւ հեզութեան կեցուած քով մուտք գործելու դէպի Յիսուսի թագաւորութիւն եւ անոր ընկերանալու իր գողգոթայի եւ իսաչի ճանապարհին վրայ:

Յիսուս իր խոնարհ մուտքով Երուսաղէմ մարդկանց նոր յոյս եւ նոր ապագայ կը խոստանար: Խոնարհ եր Յիսուսի Երուսաղէմ մուտքը, որովհետեւ

տեւ առաջին անգամ ըլլալով կը տեսնէին թագաւոր մը որ ականակի վրայ նստած կու գայ՝ խոնարհութեան գերագանց արարքով մը:

Երկրաւոր Երուսաղէմը երկնքի յաւիտենական Երուսաղէմի խորհրդանշանն է: Երկնքի արքայութեան միակ ճանապարհը խոնարհութիւնն է: Անկախ նաեւ զէնքն է որ կարող է խորտակել մեր դիմաց ծառացած բոլոր պարիսպներն ու արգելքները:

Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ կանխապատկերն է մեր փառաւոր մուտքին երկնքի արքայութիւն: Ան իր այս մուտքով բոլորովին փոխեց թագաւոր ըլլալու չափանիշերը եւ իր խոնարհութենէն առաւ գերագոյն իշխանութիւնը գործելու իր հրաշքները եւ տապալելու լումայափոխներու սեղանները եւ աղանի վաճառողներուն ինչքերը:

Մենք եւս կարող ենք մեր մէջ գտնուող արգելքները տապալել եւ վերացնել երբ կը հետեւինք մեր Տիրոջ օրինակին: Այն ատեն երբ մեզի հարցնեն թէ ինչ իշխանութեամբ կ'ընես այս գործերը, կարող ենք պատասխանել՝ խոնարհութեան իշխանութեամբ:

Եւ այսպէս, մեր ներքին տունը կը դառնայ իր հիմնական բնոյթին, որն է աղօթքի տունը: Մեր սրտերը, մեր հոգիները, մեր անձերը երբեք պետք չէ գրաւուած ըլլան աշխարհիկ զբաղումներով եւ մտահոգութիւններով:

Մարդիկ որ իրենց զգեստները դրին Յիսուսի ոտքերուն տակ՝ հրաժարեցան իրենց նախկին կեանքէն եւ «հին մարդէն», որպէսզի զգենուն նոր մարդու տարագ:

Այսօրուայ անտարանը կը հրաւիրէ մեզմէ իւրաքանչիւրը իր կեանքը դնելու Յիսուսի առջեւ:

